Վերջ տալով նամակիս խնդրում եմ երկար կեանք Վեհափառ սուրբ Հօրը մշտապէս իրագործելու իւր ազգաօգուտ նպատակները, ձեռամբ բարեկրօն Հոգևորականաց և բարեպաշտ իշխանաց։

Ներքինի մահտեսի Յովհաննէս
Նալչանդէանց

16 Ապրիլ 1871
Աղեքսանդրապոլ։

ՕՇԱԿԱՆ

Խմբագրութեան Երբեմն Խմբագրոյ.

Այս գիւղը՝ համարեա թէ մեր ազգութեան պէս հնութեանց մայր կ'հաշուի ի մէջ ամենայն գիւղաքէից. կ'անուանի սա Օշ-ական, արդա՛ւ և համաձայն իւր անուանակոչութեան երանի աչաց նոցա՝ որք կ'տեսանեն այս դրախտավայր գիւղը. ազգասէր անձանց հայրենեաց հնութիւնք ցոյց տալու համար՝ սա մէկ անջինջ արձան կանգնած կայ Հայաստան աշխարհին՝ ի մէջ համայն գիւղաքէից. հայրենասէր անձը կարող է քաղցր և ախորժ նիւթերով մի ամբողջ գիրք յօրինել սորա բոլոր հնութիւնից, ուղիղ ստորագրութեամբ։ Այս գիւղը շինված է Քասաղ գետի հիւսիսային ձորաբերանին։ Սորա արևելեան կողմն կ'գտնուի Դիտանոց անուանեալ բլուրը, որոյ գագաթից գիտող անձի աչաց առաջ կ'պատկերանայ Արարատեան ադամավայր դաշտը, կ'երևին Ս. Էջմիածին և միւս վանօրայք, կ'երևի նոյնպէս Քասաղ գետի հեղասահ քաղցր պտոյտքով երթալը տեղոյս ձորերի միջէն և ընկերանալը Մեծամօրին գետի հետ՝ և ի միասին հիւր լինելը դրախտաբուղխ Երասխ գետին. այս բլրոյս ստորոտին է գիւղիս գերեզմանոցն. այդիքը կ'գտնուին կից գիւղին դէպ ի արևմուտ և հիւսիս, որոց երեք կողմն պատած է ձորով։ Այս գիւղի արևելեան մասի մէջ կգտնուի բաղմաշնաստ Երանելի Մեսրոպը Թարգմանչի գերեզմանը. որոյ Եկեղեցին բոլորովին անշուք դրութեան մէջ է, որոյ ամեն կողմից երկնաբերձ որմերը քակուած շատ տեղեր մեծամեծ ճեղքուածներ բացուած և կիսակործան որմոց անկիւններիվերայ արագիլներից շինուած բոյներ և նոցա աղբերով նորին շքեղութիւնը տգեղացրած կայ. տեղւոյս բնակիչները որչափ կարողութիւն ունեցել են՝ առանց խնայելոյի գործ են դրած՝ իւր շինութենէն 444 թուէն մինչև ցայժմ, և Ս. Էջմիածինն միշտ օգնութիւն է արած նոցա՝ բայց միով բանիւ պարտական են Հայոց, Վրաց և Աղուանից ազգերը, որոնք իւրեանց գրաւոր լուսաւորութեան առիթ եղող բազմերախտ Թարգմանչի գերեզմանը այսպիսի անշուք և աննշան դրութեան մէջ կ'պահեն՝ եթէ մի օտար Ազգ՝ երբ տեսնէ Ս. Եկեղեցիս Մեսրոպայ այսօրին, նա ափսոսելով անարգանք պիտի չկարդայ այս երեք ազգաց . . . . . կ'թողում՝ Նրբաքննին դատողութեան ճշմարտասէր բանագիտացդ։

Եկեղեցւոյս հարաւային դռան հանդէպ կ'գտնուի Նորաշէն Մեսրոպեան Ուսումնարանը. երկյարկեան շինուած. ունի ըստ դարձակ պատշգամբներ հիւսիսային և հարաւային կողմերին. խիստ զուարճալի տեղ է այս Ուսումնարանը. վասն զի հարաւային կողմից մտա է Քասաղ գետի ձորաբերանը, որ տեղից գետի քաղցր խոխոջիւնը և թռչնոց ոգեշարժ երգերը մէկ ուրիշ աշխոյժ կնուիրէ աշակերտաց անմեղ սրտերին և անոյշ զեփիւռն էլ իւր կենսացուցիչ զովութիւնը նոցա բաշխելէն չի դադարիր. ունի բաւականաչափ աշակերտք, նոյնպէս և ուսուցիչ, Նորքեցի Սիմէոնն Աստուածատրեան, որ է եկած այս մտրիկ օրերիս, բայց ափսոս . . . . .

Ամսոյս 17ին եկին մի քանի հայրենասէր պատուաւոր անձինք, որոց անուանքն են Գաբրիէլ Սմբատեանց Նախիջևանեցի, Միքայէլ Տէր Աբրահամեան և Սիսակ Բզնունի, որոնք շատ մանրամասնարար Եկեղեցւոյս հնութիւններին տեղեկանալէն զկնի՝ եկին ուսումնարան. և բաւականաչափ հարցաքննութիւն արին աշակերտաց և գտան յառաջադէմ իւրեանց Հայոց և Ռուսաց ուսանելի առարկայից մէջ, և ապա սկսեցին երգ երգեցուցանել, որոնք երգեցին ուսումնասէր բարեշնորհ Սմբատեանց Մեսրոպը վարդապետի յօրինած երգը, որ համարեա թէ ամենն էլ բերան գիտէին. զոր արժան կ'համարիմ ընդ սմին գրել ամբողջապէս։

Ցեռոյ շնորհակալութիւն մատուցին Հոգաբարձուաց և եկին դուրս. բայց ճանապարհին շատ ցաւելով խնդրեցին նորանցից հոգս տանել արժանաւոր ուսուցիչ գտնելու. ասաց նոցա այս հետևեալ խօսքը, Պ. Հոգաբարձու Մկրտիչ Տէր Մեսրոպեան Մօրիկեանց, Սիրելիք՝ մերուստ մնարանը՝ մեծայոյս եմք որ Նորին Վեհափառութեան շնորհիւ օրըստօրէ պայծառանալու է, և ունմք բերել տալ Նորին շնորհիւ արժանաւոր ուսումնագէտ և լեզուագէտ ուսուցիչ. որով մեր զաւակները փոքր ինչ ուսման քաղցր ախորժակը առնլով կ'տեսնենք նոցա վերայ մէկ ուրիշ քաղաքական շնորհք փայլած, վասնորոյ և մեք չենք դադարել մեր կամաւոր հոգատարութիւնը նորանցից։ Ո՛հ այս սրտառուչ խօսքերը շարժեցին սիրտս և առիթ եղան համառօտակի խօսելու Մեսրոպեան Եկեղեցւոյ և Ուսումնարանի վերայ, զրս խնդրեմ ընդունել յեջս պատուական Արարատ լրագրոյդ։

Դէորգ Տ. Յարութիւնեան Մօրեկեանց

Ի 24 Ապրիլի 1871 -դ
Յոշ-ական